« ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՉԻ ԳԱՆ » ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԳ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1884 ԹԻՒ 6



ՏԻԲԵՐԻԱ

ՏԻԲԵՐԻԱ

Այս քաղաքը որ վերի պատկերին մէջ ցուցուած է՝ էր Տիբերիոյ ծովուն քով, և կը յիշուի Յովհ. Զ. 1, 23, և ԻԱ. 1։ Շինեց զայն Հերովդէս Անդիպաս և կոչելով Տիբերիա յանուն Տիբերի կայսեր, ըրաւ մայրաքաղաք Գալիլեայի։ Հերովդէս որ երկար ժամանակ կեցած էր Իտալիա՝ շինեց այս նոր քաղաքին մէջ հոյակապ պալատներ և ուրիշ շէնքեր նման այնց զոր տեսած էր ի Հռոմ և անոր մօտերը։

ՏԻԲԵՐԻԱ

Քաղաքն այնպէս անուանի եղաւ որ ծովն անգամ, որոյ եղերքն էր քաղաքը, կոչուեցաւ Տիբերիա, յանուն քաղաքին, և զարդիս կը կոչուի «Պահր էլ Թուպարիէ։» Ծովն է իբր վեշտասան մղոն երկայն և վեց մղոն լայն, և քաղաքը շինուած է ծովին հարաւային արևմտեան եղրը։ Հիմա փոքրիկ քաղաք է իբր երեք կամ չորս հազար բնակչօք։ Ունի շուրջանակի պարիսպ, բայց ժամանակը և երկրաշարժք դարձուցած են զայն յաւերակ, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ։ Տիբերիոյ ծաղկեալ ժամանակն էր, երբ մեր Տէրը կը բնակէր Կապառնայում։ Արդարև զարմանալի է որ Աւետարաններուն մէջ յիշատակութիւն չկայ թէ Քրիստոս դնաց երբեք այն քաղաքը, կրնայ ըլլալ սակայն թէ դնաց, բայց Աւետարանիչք չյիշեցին։ Եթէ արդարև չդնաց հոն Քրիստոս, պատճառն անտարակոյս այս էր, որ Հերովդէս ատելի էր Հրէից և գլխատեց զՅովհաննէս Մկրտիչ։

Տիբերիոյ ծովուն մօտ կային ջերմուկներ որ շատ անուանի էին Հռոմայեցի հեղինակին Պլինիոսի ժամանակ ։

Յետ անկման Երուսաղէմի, Հրէից Սանհետրինը (ազգային ժողովը) փոխադրուեցաւ Սեպփորիս, և ապա ի Տիբերիա, որ երևելի եղաւ Հրէից դպրոցներուն համար ։ Կոստանդիանոսի ժամանակ քրիստոնեայ եղաւ քաղաքը, և Խաչակրաց ժամանակ եղան նշանաւոր կռիւներ Տիբերիոյ մօտերը ։ Հրէից մէջ մեծ յարգ ունի այս քաղաքը մինչև ցայսօր ։ Շատ գեղեցիկ տեսարան կ'ընծայէ ծովը քաղաքին, ուստի կը տեսնուի հեռուն Հերմոն լերան ձիւնապատ գագաթը, և ծովին վերի ծայրը դաշտի վրայ կ'երևան Կափառնայումի աւերակները և ուրիշ տեղեր որ նշանաւոր են Քրիստոսի բնակելուն համար անոնց մէջ ամիսներով իւր քարոզութեան ժամանակ ։

ԹԼԱԼՈՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Աւետաբերի Մայիսի թուոյն մէջ խօսեցանք համառօտիւ Կեդրոնական Ամերիկայի աւերակներէն ոմանց վրայ, և խոստացանք Յունիսի թուոյն մէջ խօսել այն աւերեալ քաղաքները և գիւղերը բնակող ժողովրդեան վրայ ։

Զարդիս իբրև ճշմարիտ ընդունուած է թէ Եուգաթանի աւերակները ժամանակաւ քաղաքներ և գիւղեր էին զորս շինած էր Մայա կոչուած ժողովուրդը որ կը բնակէր Եուգաթան և շրջակաները, երբ Սպանիացիք նուաճեցին զանոնք վեշտասաներորդ դարուն մէջ ։ Այս Մայայք էին այժմու հին բնիկներուն նախնիները ։ Գաղիացի գիտունը Շառնէյ որ շատ աշխատած է անոնց քաղաքներուն և գիւղերուն աւերակները քննելու՝ կը կարծէ թէ այս հեթանոս ժողովուրդն ի սկզբան կը մատուցանէր իւր աստուածներուն թռչուն, պտուղ և ծաղիկ. յետ ժամանակաց Մեքսիգոյի հին բնակիչքմուծին հոն մարդազոհի սովորութիւնը ։ Երբ Սպանիացիք գտան այս երկիրը, Մայայք շատ տկարացած էին ներքինդ ժամութիւններէ և պատերազմներէ, ուստի և դիւրաւ նուաճուեցան ։ Անոնց գլխաւոր աստուածներէն մին էր [illegible], որ կը կարծուէր թէ կը բնակէր բարձր լերանց գլուխները և կ'իշխէր ամպերու և անձրևի ։ Մայայք կը զոհէին մարդիկ այս աստուծոյն մանաւանդ երբ անձրև չկար և երկիրը կը նեղուէր երաշտութենէ ։ Մայիսի Աւետաբերին մէջ կայ այս աստուծոյն աղօտ պատկերը մեհենին պատին վրայ ։ Հոս կը դընենք անոր մեծը ։ Աստուծոյն տեսիլն է ահագին և անհեղեդ, ծնօտը և քիթը գրեթէ կից իրարու, և բերնէն կը փչէ հով ։ Ընձառիւծու մորթ ձգուած է անոր ուսերուն վրայ, և օձ մը կը կենայ անոր սրունից մէջտեղ ։ Երբ երաշտութիւնը կը տևէր չորս տարի



ՀՈՒԻՑԻԼՕՓՕՉԹԼԻ

անընդհատ, դերի տղայոց բազմութիւն մը կը զոհէին այս աստուծոյն ։ Տղայք դրուելով խուռւչ մը՝ կը մնային հոն փակուած, մինչև կը մեռնէին անսուաղութենէ ։ Խուռւչը չէր բացուէր, բայց միայն երբ հարկ կ'ըլլար այնպիսի նոր զոհ մը ընել ։ Վայրենի հեթանոս ցեղերու բնակարանները են արդարև "բռնութեան բնակարաններ," ինչպէս կ'ըսէ Սաղմոսերգուն ։

Մայաներուն պատերազմի աստուածն հաւանականապէս էր նոյնը զոր կը պաշտէին հին Մեքսիգացիք Հուիցիլօփօչթլի անուամբ ։ Բան անձրևի աստուածն աւելի փայելչադէմ էր այս, և կը թուի թէ կը քաշէր թշուառ կալանաւորներ շղթայիւ ։ Ինչպէս անձրևի աստուածը նոյնպէս սա կը պաշտուէր մարդազոհիւք ։

Գօբանի անդրին է մին այն անհեդեդ կուոց անդրի պատկերներէն որ գտնուեցան Հոնտուրաս, ի հարաւոյ Եուքադանու ։ Այս անդրիներուն չորեքտասանը նկարագրուած է ։ Անոնց

փոքրագոյնն է իբր մետասան կամ երկուտասան ոտք բարձր, և աւելի քան երեք ոտք լայն և թանձր։ Անդրինեռուն վրայ կան քանդակներ, յորոց ոմանք շատ դեղեցիկ են։ Իսկ անդրինեռուն նիւթն է կակուղ քար որ առատ կը գտնուի այն դաւառին մէջ։ Գիտունք կը քննեն հիմա ասոնց վրայ և մեհեաններուն մէջ քանդակուած արձանագրութիւնները, և եթէ յաջողին կարդալ զանոնք, ինչպէս յաջողած են կարդալ եգիպտական արձանագիրները, պիտի դիտանք անտարակոյս շատ բան այն ժողովրդոց վրայ որ կը բնակէին այն երկիրը՝ Սպանիացւոյ հոն մուտ գտնելէն առաջ։

ՄՕՐՍ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Երեքտասան ամք անցին յորմէ հետէ մայրս մեռաւ, և ես բնիկ գիւղէս երկարժամանակեայ բացակայութենէ մը եաքը, նստայ այն նուիրական հողակոյտին քով ընդ որով տեսած էի մօրս թաղուիլը։ Այն ոգալի ժամանակէն ի վեր մեծ փոփոխութիւն եկած էր իմ վերայ։ Տղայական տարիներս թռած գացած էին, և ընդ նոսա իմ մանկական բնաւորութիւնս։ Աշխարհն իսկ ինձ փոխուած էր. և, երբ նստայ մօրս գերեզմանին մօտ, դժուարաւ կարէի հաւատալ թէ ես այն անհոգ, երջանիկ արարածն եմ, որոյ այտերը չափազանց դորովով կը համբուրէր մայրիկը։ Համբոյր կենսատու։

Բայց երեքտասան ամայ դէպք չը կարացին ջնջել մտքէս մօրս համբուրին յիշատակը։ Այժմ իսկ ինձ կը թուի որպէս թէ դեռ երէկ տեսած էի զնա, անոր դէմքն աչուքներուս առջեւն է, և անոր քաղցր ձայնը դեռ կը հնչէ ականջիս։ Տղայութեան և մանկութեանս զուարթ երազք կը նորոգին մտքիս մէջ, և եթէ անոնց մէջ դառն յիշատակներ չլինէին, արտասուքս ուրախութեան արտասուք պիտի լինէին։ Արդարև ինչին դէպքի մը յիշատակը այժմ կը կսկծցունէ սիրտս, և ես կը պատմեմ զայն որ աղայք ասելն յարգելն զանոնք որչափ որ պէտք է։

Մայրս երկար առեն հիւանդ էր, և ես այնչափ սովորեցայ անոր դեղնած դիմաց և տկար ձայնին, որ ալ չէի վախնար։

Ի սկզբան կուլայի ասասիկ, բայց երբ օր ըստ օրէ դպրոցէն դառնալով կը գտնէի մայրս նոյն վիճակին մէջ, սկսայ հաւատալ որ մինչև եաքը մայրս ողջ պիտի մնար, բայց բնական աղիմ սիրտս չհալելու համար քար լինելու էր, քար կարծր։ Ա՜հ, մայրս խնդրեց յինէն որ վար երթամ և մի գաւաթ ջուր բերեմ։ Բայց աւա՜ղ, ես փոխանակ վազելու և մօրս հրամանը սիրով կատարելու, սրանեղութեամբ մը ըսի, «Ինչո՞ւ սպասաւորներուն չես հրամայեր, և ինձ կ'ըսես որ ջուր բերեմ։» Ա՜հ, յայնժամ յանդիմանական նայուածքով մը, զոր, եթէ հարիւր տարի ալ ապրիմ, պիտի չմոռանամ, ըսաւ ինձ մեղմիկ, «Ի՞նչ աղջիկ պիտի քերէ՞ գաւառն մը ջո՜ւր ի՜ւր խեղճ հիւանդ մօրը։» Ա՜հ. այս խօսք սիրտս կտոր կտոր ըրաւ։

Յետոյ գացի ջուր բերի, բայց ջուրը բերի ոչ սիրով, և ոչ յօժարութեամբ։ Յետոյ փոխանակ ժպտելու և համբուրելու մօրս ձեռուըներ ինչպէս սովոր էի ընել, աճապարանօք դաւաթն վար դրի, և փութով մեկնեցայ սենեկէն։ Քիչ մ'ատեն խաղալէն եաքը գացի յանկողին պառկելու առանց մօրս դիշեր բարի ըսելու։ Բայց երբ միայնակ մնացի սենեկիս մէջ, յիշեցի թէ այն օր ինչպէս ժամագոյն կ'երևէր մօրս դէմքը, և ինչպէս կը սարսռէր անոր ձայնն երբ կ'ըսէր, «Ի՞նչ աղջիկ պիտի քերէ՞ գաւառն մը ջո՜ւր ի՜ւր խեղճ հիւանդ մօրը։» Ալ սիրտս յուզեցաւ, հոգիս խռովեցաւ, չկրցայ քնանալ։ Ելայ ընդ փոյթ գացի մօրս սենեակը ներողութիւն խնդրելու. նա անոյշ քնոյ մէջ ընկղմած էր, և ըսին ինձ թէ պէտք չէր որ զայն արթընցունէի։ Ես ևս չպատմեցի որ և է մէկուն ինչ որ զիս կը խռովէր, այլ դարձայ անկողինս միտքս դնելով առաւօտուն կանուխ երթալ ներողութիւն խնդրել մօրմէս, այնպէս իմ սրտիս ցաւոց կրակը չիջուցանել։

Երբ առաւօտ եղաւ, քնէս արթընցայ, և աճապարանօք հանդերձներս հագնելով շուտ մը գացի մօրս սենեակը նորա ձեռուընեն համբուրելու և անկէ ներողութիւն խնդրելու։ Աւա՜ղ. նա մեռած էր։ Նա ալ չխօսեցաւ, ալ չժպտեցաւ ինձ, ու երբ մօտ երթալով բռնեցի այն ձեռուըներ զորս կը

ԳՈՐԱՆԻ ԱՆԴՐԻՆ

փոքրագոյնն է իբր մետասան կամ երկուտասան ոտք բարձր, և աւելի քան երեք ոտք լայն և թանձր։ Անդրինեռուն վրայ կան քանդակներ, յորոց ոմանք շատ դեղեցիկ են։ Իսկ անդրինեռուն նիւթն է կակուղ քար որ առատ կը գտնուի այն դաւառին մէջ։ Գիտունք կը քննեն հիմա ասոնց վրայ և մեհեաններուն մէջ քանդակուած արձանագրութիւնները, և եթէ յաջողին կարդալ զանոնք, ինչպէս յաջողած են կարդալ եգիպտական արձանագիրները, պիտի դիտանք անտարակոյս շատ բան այն ժողովրդոց վրայ որ կը բնակէին այն երկիրը՝ Սպանիացւոյ հոն մուտ գտնելէն առաջ։

ՄՕՐՍ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Երեքտասան ամք անցին յորմէ հետէ մայրս մեռաւ, և ես բնիկ գիւղէս երկարժամանակեայ բացակայութենէ մը եաքը, նստայ այն նուիրական հողակոյտին քով ընդ որով տեսած էի մօրս թաղուիլը։ Այն ոգալի ժամանակէն ի վեր մեծ փոփոխութիւն եկած էր իմ վերայ։ Տղայական տարիներս թռած գացած էին, և ընդ նոսա իմ մանկական բնաւորութիւնս։ Աշխարհն իսկ ինձ փոխուած էր. և, երբ նստայ մօրս գերեզմանին մօտ, դժուարաւ կարէի հաւատալ թէ ես այն անհոգ, երջանիկ արարածն եմ, որոյ այտերը չափազանց դորովով կը համբուրէր մայրիկը։ Համբոյր կենսատու։

Բայց երեքտասան ամայ դէպք չը կարացին ջնջել մտքէս մօրս համբուրին յիշատակը։ Այժմ իսկ ինձ կը թուի որպէս թէ դեռ երէկ տեսած էի զնա, անոր դէմքն աչուքներուս առջեւն է, և անոր քաղցր ձայնը դեռ կը հնչէ ականջիս։ Տղայութեան և մանկութեանս զուարթ երազք կը նորոգին մտքիս մէջ, և եթէ անոնց մէջ դառն յիշատակներ չլինէին, արտասուքս ուրախութեան արտասուք պիտի լինէին։ Արդարև ինչին դէպքի մը յիշատակը այժմ կը կսկծցունէ սիրտս, և ես կը պատմեմ զայն որ աղայք դում մը կ'ըսէր նաև թէ մայրս պիտի մեռնէր։

Մի օր, երբ դասս աղէկ չդիտանալուս համար կարգիս մէջ աւելի վար լինայ, դարձայ առն խոժոռ և վհատեալ, ելայ գացի մօրս սենեակը։ Մայրս քան զսովորականն աւելի դեղնած էր, սակայն և այնպէս կը ցուցնէր ինձ նոյն սիրալիր ժպիտը որով յար կ'ողջունէր վերադարձս։

Աւա՜ղ, երբ միտքս կը բերեմ տասն և երեք ամայ անցքը, կը խորհիմ թէ մայրս պիտի մեռնէր։

Մայրս երկար առեն հիւանդ էր, և ես այնչափ սովորեցայ անոր դեղնած դիմաց և տկար ձայնին, որ ալ չէի վախնար։

Ի սկզբան կուլայի ասասիկ, բայց երբ օր ըստ օրէ դպրոցէն դառնալով կը գտնէի մայրս նոյն վիճակին մէջ, սկսայ հաւատալ որ մինչև եաքը մայրս ողջ պիտի մնար, բայց բնական աղիմ սիրտս չհալելու համար քար լինելու էր, քար կարծր։ Ա՜հ, մայրս խնդրեց յինէն որ վար երթամ և մի գաւաթ ջուր բերեմ։ Բայց աւա՜ղ, ես փոխանակ վազելու և մօրս հրամանը սիրով կատարելու, սրանեղութեամբ մը ըսի, «Ինչո՞ւ սպասաւորներուն չես հրամայեր, և ինձ կ'ըսես որ ջուր բերեմ։» Ա՜հ, յայնժամ յանդիմանական նայուածքով մը, զոր, եթէ հարիւր տարի ալ ապրիմ, պիտի չմոռանամ, ըսաւ ինձ մեղմիկ, «Ի՞նչ աղջիկ պիտի քերէ՞ գաւառն մը ջո՜ւր ի՜ւր խեղճ հիւանդ մօրը։» Ա՜հ. այս խօսք սիրտս կտոր կտոր ըրաւ։

Յետոյ գացի ջուր բերի, բայց ջուրը բերի ոչ սիրով, և ոչ յօժարութեամբ։ Յետոյ փոխանակ ժպտելու և համբուրելու մօրս ձեռուըներ ինչպէս սովոր էի ընել, աճապարանօք դաւաթն վար դրի, և փութով մեկնեցայ սենեկէն։ Քիչ մ'ատեն խաղալէն եաքը գացի յանկողին պառկելու առանց մօրս դիշեր բարի ըսելու։ Բայց երբ միայնակ մնացի սենեկիս մէջ, յիշեցի թէ այն օր ինչպէս ժամագոյն կ'երևէր մօրս դէմքը, և ինչպէս կը սարսռէր անոր ձայնն երբ կ'ըսէր, «Ի՞նչ աղջիկ պիտի քերէ՞ գաւառն մը ջո՜ւր ի՜ւր խեղճ հիւանդ մօրը։» Ալ սիրտս յուզեցաւ, հոգիս խռովեցաւ, չկրցայ քնանալ։ Ելայ ընդ փոյթ գացի մօրս սենեակը ներողութիւն խնդրելու. նա անոյշ քնոյ մէջ ընկղմած էր, և ըսին ինձ թէ պէտք չէր որ զայն արթընցունէի։ Ես ևս չպատմեցի որ և է մէկուն ինչ որ զիս կը խռովէր, այլ դարձայ անկողինս միտքս դնելով առաւօտուն կանուխ երթալ ներողութիւն խնդրել մօրմէս, այնպէս իմ սրտիս ցաւոց կրակը չիջուցանել։

Երբ առաւօտ եղաւ, քնէս արթընցայ, և աճապարանօք հանդերձներս հագնելով շուտ մը գացի մօրս սենեակը նորա ձեռուընեն համբուրելու և անկէ ներողութիւն խնդրելու։ Աւա՜ղ. նա մեռած էր։ Նա ալ չխօսեցաւ, ալ չժպտեցաւ ինձ, ու երբ մօտ երթալով բռնեցի այն ձեռուըներ զորս կը

դներ իմ դլխուս վերայ դիս օրհնելու համար, անոնք այնչափ պաղ էին որ սարսափ աղդեցին ինձ։ Խոնարհեցայ ի գետին մօրս անկողնոյն քով, և դառնապէս լացի և ողբացի կողկողագին։ Ցաւոցս սաստկութենէն կը փափաքէի մեռնիլ և մօրս հետ թաղուիլ։

Եւ հիմա որ այս տարիքը հասած եմ, աշխարհ կուգայի, եթէ կարելի լինէր քիչ մ՚ատեն ողջ տեսնել մայրս, անոր բերնէն լսելու թէ արդեօք տըղայական ապերախտութեանս ներած է։ Բայց, աւաղ, ալ չեմ կարող դինք յետս կոչել։ Եւ երբ յետ այսորիկ կենամ մօրս գերեզմանին քով, և խորհիմ անոր բաղմադիմի բարութեանց վերայ, անոր վերջին յանդիմանական նայուածքին յիշատակը իրրև ղօշ պիտի խայթէ սիրտս։

Աղնիւ տղայք, կ՚ուզէ՞ք դուք ալ այս վիճակն իյնալ։ Անտարակոյս չէք ուզեր։ Ուրեմն հնազանդեցէք ձեր ծնողաց սիրով և յօժարութեամբ։ "Ան ոչէր որ էր հայրը ծաղր կ՚ընէ, և էր մօրը հնազանդելը կ՚անարգէ, յորելուն ոգեաւորները պիտի փորձեն, ու ղանկոս արձիւներուն յոգերը պիտի ուտեն," կ՚ըսէ Սրբազան մատեանն։

Խարբերդ Թարգմանեաց յԱնգլիական

ՊՕՂՈՍ Թ. ՍԻՄՈՆԵԱՆ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԸ

Աւեսաբերի ընթերցողք քաջ դիտեն դորտերու թէ՛ կերպարանքը և թէ անոնց սովորութիւններէն շատը։ Որչափ քիչերը դիտեն դորտին պատմութիւնն ի ծննդենէ։ Կ՚ուզենք այս մասին վրայ խօսել համառօտիւ։

Գարնան եղանակին երբ խոտերը կանաչ են և օդը մեղմ, եթէ երթաք փոքր լճի մը քով ուր դորտեր կան, պիտի տեսնէք շատ անգամ ջուրին վրայ ըղացող կանաչ նիւթ մը որ կը կոչուի ֆորֆէ ըրյո՚նէ, որոյ հետ խառն են փոքր փոքր դնդաձև մարմիններ որոյ իւրաքանչիւրն ունի ի միջոցին սև կէտ մը կամ արատ։ Այս դնդաձև մարմինք են դորտի ձու։ Քանի մը օր ետքը այն սև կէտերը կը սկսին մեծնալ, և կ՚ըլլան շուտով շարժուն սանտանիկներ որ պատկերին մէջ ցուցուած են "a" նշանով։ Երբ այս անտանիկներուն տուաը (պոչը) կ՚երևայ, անտանիկը չկրնար դեռ խաղալ երթալ իւր տեղէն կերակուր փնտռելու, այլ կը մնայ ձուոյն այն մասին մէջ որ ի սկզբան կը պատէր այն սև կէտը։ Բիչ ետքը անտանիկը կ՚ըլլայ կարող ըղալ շուրջանակի իւր երկայն տատն օգնութեամբ, բայց դեռ չնմանիր դորտի։ Կը կենայ հանդարտ, և չերևիր թէ կը խռովի ձայնէ կամ աղմկէ, բայց քիչ ետքը կը թուի խըռովիլ, եթէ ջուրը յուղուի։ Եթէ այս անտանիկները դրուին անձրևի ջրոյ մէջ, կ՚երևի թէ չեն դտներ կերակուր։ Իրը երկու ամիս քիչ փոփոխութիւն կը կրեն, անոնց աչուքները և մարմինը միայն կը մեծնան, բայց երկու ամիս ետքը եթէ քննես, կը տեսնես որ անոնց իւրաքանչիւրն ունի երկու ետևի սրունք իւր տատն մօտ, ինչպէս կը ցուցնէ պատկերին մէջ "b" դիրը։

Այս երկու սրունք կ՚աճին և կարճ ժամանակի մէջ կ՚առնուն այն կերպարանքը որ կը ցուցնէ "c" դիրը։ Երբեք կամ չորս շաբթուան վերջը կ՚երևան առջևի երկու սրունքը, մարմինը կը կորսնցունէ իւր կակուղ դեղնագոյն տեսիլը, և կը թուի տակաւ առնուլ ներքին ոսկրեղէն կազմած մը։ Այս միջոցին կ՚ըլլայ մեծագոյն փոփոխութիւնը, այսինքն՝ պոչը կ՚ըլլայ անհետ։ Այս չկատարուիր յանկարծ, և տուաը չ՚իյնար իսկ և իսկ, այլ սակաւ առ սակաւ կը կարճանայ, մինչև բոլորովին կ՚ընկղմի, և անոր նիւթը կ՚ըլլայ սնունդ դորտին մարմնոյն, այնպէս որ անտանին կ՚ըլլայ կատարեալ դորտ, ինչպէս կը ցուցնէ "d" դիրը։ Այնուհետև դորտն ունի սրունք և ոտուքներ, և փոխանակ ապրելու միշտ ջրոյ մէջ, կրնայ ելլել ցամաք և մնալ երկար ատեն բայց օդոյ մէջ։ Ո՞չ ապաքէն "զարմանալի փոփոխութիւն" է այս։

"ՉԵՄ ԿՐՆԱՐ ՔԱԿԵԼ"

Փոքրիկ աղջիկ մը նստած կը քակէր կար մը ղոր սխալ կարած էր։ Շատ աշխատեցաւ ասղանին հանել և բաւական յաջողեցաւ, սակայն կտաւին վրայ ասղանւոյն ծակերը մնացին, այնպէս որ կարանին տեղը կը տեսնուէր։ Փոքրիկ աղջիկը ղայս տեսնելով աղաղակեց արտասուօք, "Ո՛հ, մայր, չեմ կրնար քակել այս կարը։" Աղջիկն ասով կը սրվէր կենաց դառնագոյն դասերէն մին։ Աւելի նեղութիւն կուտայ մեզ քակել բան մը ղոր չենք կրնար քակել յաջողութեամբ՝ քան բոլոր մեր առօրեայ գործերը, և որովհետև շատ աղէկ գիտենք ղայս, կը ցաւինք շատ անգամ տեսնելով որ տղայք և աղջկունք կ՚ընեն այնպիսի բաներ ղոր յետոյ պիտի բաղձան թէ ըրած չըլլային։ Մեծ տղայք և աղջկունք աւելի սաստիկ ցաւ կը զգան աւելի ծանր յանցանաց համար։ Դուք ամէնքդ գիտէք թէ կը բաղձաք ըրած չըլլալ այս ինչ կամ այն ինչ գործը, և կը ցաւիք որ այդ անհնարին է։ Եւ արդ, ի՞նչ է ասոր դարմանը։ Ահա այս է՝ Ջանանք գործ մը ուղիղ ընել առաջին անդամ, և երբեք պիտի չուզենք ըրած չըլլալ ղայն։ Աղօթենք առ Հայրն երկնաւորն նա երբեք սխալ չ՚առաջնորդեր մեզ։ և ինչ գործ որ կ՚ընենք անոր առաջնորդութեամբը, բնաւ պիտի չուզենք թէ ըրած չըլլայինք։

ՀԱՆԵԼՈՒԿ ՄԸ ՍՈՒՐԲ ԳՐՔԷՆ

Եկաւ յաշխարհ առանց մարմնոյ և հոգւոյ, բարւոյ և չարի տեղեակ ըրաւ, երկու անձինք տեսան ղայն և անոնցմէ մին մեռաւ։ Կոյրերն ևս կը տեսնեն ղայն, և կաղք կը քալեն ա-նով, մեռեալք իսկ կը յառնեն։ Զբաղմանց և Աստուծոյ հետ յարաբերութիւն ունի։

Աղրիանուպոլիս Ս. Յ. Գ.

Ամերիկայի Մեսրոպեան ընկերութեան կողմէն
Խմբագիր Ա. Ք. ԿՐԻՆ
Ֆիլանճելպիա հօգուշտ. Ա. Երիգան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅՃԱՃԵԱՆ